

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում զրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшак».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւաքանակը բաժին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Մի գիծ մամուլի գործունէութիւնը.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բժիշկների վարձատրութեան խնդիրը.
Նամակ էջմիածնից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեսուդէմի պարտքի խնդիրը.
Ժիֆֆարի մի նոր հնարադիտութիւնը. Արտա-
քին լուրեր.—ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—
ՏԵՂԵԿԱՅՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՍԻԱՆ. Երեսուդէմի նախագիտում:

ՄԻ ԳԻԾ ՄԱՍՈՒԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆԻՅՑ

Կ. Պոլսում հրատարակւում է այժմ «Մա-
սիս» անունով երկշաբաթաթերթը: Այնտեղ
հրատարակւում է և «Արեւելք» անունով
ամենօրեայ լրագիրը: «Մասիսը» այժմ խումբ
բազմաթիւ մի խումբ երիտասարդ գրող-
ների: «Արեւելքը» մէջ էլ գրում են տարե-
քով երիտասարդ գրողներ, բայց լրագրի
խմբագրողը էֆենդիներէն բաղկացած մի
վարչութիւն է:

«Մասիսը» երիտասարդների օրգան է,
«Արեւելքը» էֆենդիների օրգան: Թէ «Մասի-
սը» և թէ «Արեւելքը» մի և նոյն էֆենդի-
ան է վարչութեան անդամութիւնն է: «Ա-
րեւելքը» մի յայտնի ուղղութեան կամ
աւելի լաւ է ասել, ոչ մի ուղղութեան մէջ
չը պահելու համար, այդ էֆենդիական
վարչութիւնը «Մասիսը» յանձնել է այն
մի խումբ, վարչութեան կարծիքով երե-
տասարդ գրողներին, որոնք «Մասիսի»
մէջ գրելով, և «Մասիսով» զբաղւելով հե-
ռու են մնում «Արեւելքից»: Այդպիսով մի
խումբ մարդիկ, որոնք նոյնքան զբաղւում
մարդիկ են, որքան և Ստամբուլի սահման-
ները, ուղղակի և անուղղակի կերպով իրանց
ձեռքն են առել Պոլսի մամուլի երկու փողը
ի շատ է նշանաւոր օրգանները և ինչ ու-
ղում են, անում են այդ մամուլի հետ:

Իսկ թէ ինչ են անում դրանք.—այդ Ռուսա-
հայաստանի ընթերցողը հեշտ կարող է երեւա-
կայել: Թող ներքի մեզ միայն, յիշեալ երկու օր-
գանների փոխադարձ յարաբերութեան մասին
այդ ընդհանուր տեղեկութիւնները հաղորդե-
լուց յետոյ, մի գիծ առաջ բերել, որը բաւա-
կան պարզ գաղափար կարող է տալ թէ ինչ
բարձրութեան վրա է կանգնած թիւրքա-
հայերի մամուլը, որը իր մէջ է ամբողջում
նրանց բոլոր գրական ոյժերը:

Կ. Պոլսում կայ մի «ազգային հիւանդա-
նոց»: Այդ հիւանդանոցը կառավարում են
մի խումբ մարդիկ, որոնք անուանւում են
հիւանդանոցի հոգաբարձութիւն: Հիւանդա-
նոցը պահւում է հասարակական փողո-
րով:

Նորերս «Մասիս» երկշաբաթաթերթը
հրատարակել է մի առաջնորդող այդ հի-
ւանդանոցի ներքին գրութեան մասին, և
շատ տխուր գծերով նկարագրելով նրա այժ-
մեան վիճակը, առաջարկում է հիմնովին
բարեփոխել հիւանդանոցը: Այդ նպա-
տակին հասնելու համար յօդուածագիրը
առաջարկում է նոր, աւելի հասկացող, բա-
նիմանց մարդիկ մտնել հոգաբարձութեան
մէջ, որի անդամները ընդհանրապէս ազէտ,
թէև հարուստ վաճառականներ լինելով,
չեն կարողանում հիւանդանոցը ցանկալի
գրութեան մէջ պահել, և մի նպատակ մի-
այն ունեն.—այն է որքան կարելի է խա-
յող լինել, կարծելով թէ խնայողութիւն ա-
նկէն է հիւանդանոցի հոգաբարձութեան
պաշտօնը:

Ռուսահայաստանի ընթերցողը անկասկած
ոչինչ զարմանալի, արտասուր բան չէ գրա-
նում «Մասիսի» այդ նկատողութիւնների
և առաջարկութեան մէջ: Դրանից աւելի
խիստ և կծու քննադատութիւններ շատերը
ամեն օր առիթ են ունենում կարգաւ մեր
լրագիրների մէջ տեղեկան ամեն տեսակ հա-
սարակական-բարեգործական Տիֆլիսի
թիւնների մասին: Հասարակական հիմնա-
րկութիւնների քննադատելը մամուլի սովո-
րական իրաւունքն է: Բայց եկէք ու տեսէք,
որ այդ սովորական, իրանից ոչինչ առան-
ձին բան չը ներկայացնող յօդուածը լոյս
տեսնելուն պէս ահազին դրոշմ է գցել Կ.
Պոլսի գանապան շրջաններում, ինչպէս գր-
ւում են այնտեղից: Եֆենդիները կատարում
են, հարուստները փրփրում են. հոգաբար-
ձութեան անդամները կատաղութիւնից չը դի-
տեն ինչ անեն. փնտռում են գրողներին. գնում
գալիս են: «Արեւելքի» էֆենդիական վարչու-
թեան անդամները զգաձի նման շանթեր
են արձակում «Մասիսի» խմբագիրներին վը-
րա, որ համարձակվել են այդպիսի բան գը-
րել և տպագրել:

Այդ վարչութեան անդամներն այնքան
ապստամբ են և վրդովվել, որ «սագրերին» չը
գրողները համար վճում են «Արեւելքի»
մէջ հեղքել այն բոլորը, ինչ որ գրված է
«Մասիսի» էջերում. այսինքն մի և նոյն վար-
չութիւնը վճում է իր արտօնութեան ներ-
քայ գտնվող մի օրգանում գրվածը հեղքել
միւս օրգանում... Եւ ահա տպագրւում է
«Արեւելքում» պատուէր տուած յօդուածը,
—որի հեղինակը անկասկած փողով գրելը
սովորական պարագայում է շինել իր հա-
մար,—որի մէջ աշխատում են հեղքել հի-
ւանդանոցի մասին գրածները, խուճկ ծխե-
լով հարուստ և բարձրագիւր էֆենդիների
մարդասիրութեանը և անձնութեանը....

Մեր նպատակը չէ անկասկած պարզել թէ
արդեօք «Մասիսի» գրածներն են չափա-
զանց հիւանդանոցի և էֆենդի հոգաբար-
ձութեան մասին, թէ «Արեւելքի» գրածները
—այդ այնքան հետաքրքրական չէ: Մեզ
համար կարեւոր է այն կէտը, որ մի լրագրի
յօդուածը աղմուկ է հանում միմյան այն
պատճառով, որ դիքը ունեցող հարուստնե-
րի դէմ է գրած, իսկ միւս լրագիրն էլ
հեղքում է այդ յօդուածը միայն նրա հա-
մար, որ իր պարտաւորութիւնն է համա-
րում խուճկ ծխել այդ նոյն դիքը ունեցող
հարուստների առաջ: Ուրեմն, թէ աղմուկը
և թէ գովասանքը միայն նրա համար են,
—որ հարցը վերաբերում է ոչ թէ խանե-
րի մէջ փնթող համալսելին, կամ հիւանդա-
նոցի քաղցած ապաստանվածներին, այլ Բոս-
ֆորի ափերում շքեղ տներին մէջ նստած է-
ֆենդիներին....

Ասացէք, խնդրեմ, ինչ ազդեցութիւն, ինչ
բարոյական ոյժ և ինչ իդէալ կարող է ու-
նենալ այն մամուլը, որը մինչև այսօր էլ
էֆենդիների հըր հպատակն է, և որը մինչ-
չև այժմ էլ չէ կարողացել դուրս գալ իր այդ
վիճակից և անկախ դիքը բռնել: Ինչ դրող
է այն դրողը, որը մի կողմից պէտք է
դողայ փողաւորների առաջ, իսկ միւս կող-
մից փողով պէտք է վաճառէ իր դրիչը ու
համոզմունքը:

Վերջապէս ինչ կարող է ուսուցանել
ժողովրդին այն լրագրութիւնը, որը ազէտ,
բայց փող ունեցող մարդկանց հասարակա-
կան գործունէութեան քննադատին ան-
գամ համարում է մի սոսկալի յանդուու-
թիւն, ծայրահեղ սանձարձակութիւն....

Կրկնում ենք, ինչ բարոյական ոյժ, ինչ
ազդեցութիւն և ինչ նշանակութիւն կարող
է ունենալ այդպիսի մամուլը....

Թող իրանք պօլսեցի գրականագէտները
պատասխանեն:

Մէկը մի ծանուցում է իր համոզմունքը և
խեղքը. մի ուրիշը ինքն հասարակական փո-
ղեր է ուսում և ապա յօդուածներ գրում փո-
ղեր ուսողների դէմ, երրորդը սրա նրա հըր-
մանով մէկի դէմ հայհոյանք է գրում, իսկ
միւսը համար գովասանք, մի ուրիշ հրապա-
րակասոս համոզմունք, սկզբունք, ամօթ ու-
նենալ նոյնքան շաղկապութիւն է համարում,
որքան Պարկից եկած մօղային իրեղենները,
և միամիտները կարծում են, թէ այդպիսի
մամուլը հասարակաց կարծիք պիտի ղեկա-
վարէ, ժողովուրդ պիտի կրթի....

Խ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԺՇԿՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ում չէ յայտնի այն դժգոհութիւնը, որ դժու-
թիւն ունի հասարակութեան և բժիշկների մէջ:
Հասարակութիւնը դանդաղում է, թէ բժիշկ-
ներն անգոհ են, անխիղճ են, և մի այցելութեան
համար վերցնում են 3 ռուբլի, 5 ռուբլի, ա-
ռանց նայելու թէ արդեօք հիւանդը ունեւր է,
թէ չըւուր: Իսկ բժիշկներն իրանց կողմից միշտ
արտնջում, դանդաղում են, թէ իրանց հիւանդի
մօտ են կանչում, բայց փող չեն տալիս, թէ
այնտեղ, որ քսան ռուբլի պիտի ստանան, միայն
հինգ են ստանում, թէ շատ անգամ իրանք իրանց
գրպանից ծախսեր են անում կառքի վրա, և
մինչև իսկ այդ ծախսն էլ չեն ստանում, և այն
և այն:

Երկու կողմի այդ տեսակ դանդաղանքը սովո-
րական են: Այդ փոխադարձ դժգոհութիւնը յա-
ճախ ունենում է վատ հետեանքներ. կամ բժիշկը,
նեղացած, դադարում է մտահմանք հիւանդին այ-
ցելի, և կամ հիւանդատէրը զգլած այդ վճարի
խնդրից, մի տեսակ դժուարութիւն է գրում
բժիշկ հրաւիրելու.—իսկ հետեանքը էլի այն է
լինում, որ հիւանդը տուժում է:

Ահա այդ պատճառով ուշադրութեան արժանի
է այն լուրը, որ հաղորդում են մայրաքաղաքի
լրագիրները, թէ պետական խորհրդում շուտով
պէտք է քննվի մի նախագիծ, բժիշկների վարձատ-
րութեան վերաբերութեամբ:

Աւելորդ չենք համարում ընթերցողներին ծա-
նօթացնել այդ նախագիծն հետ:

Բժիշկի վարձատրութեան չափը, համաձայն նոր
նախագիծի, կախումն պիտի ունենայ հետեանք
հանգամանքներից.—նախ որքան ազդեանակու-
թիւն ունի քաղաքը կամ գիւղը, և երկրորդ ինչ
հարստութեան տէր է և ինչ հասարակական դիքը
ունի հիւանդը:

Առաջին կէտի վերաբերութեամբ տեղերը ե-
րեք կարգի են բաժանւում.—այնպիսի աւաններ
և շէներ, որոնց բնակիչների թիւը 10 հազարից
աւելի չէ, այնպիսի քաղաքներ, որոնց բնակիչնե-
րի թիւը 100 հազարից աւելի չէ, և այնպիսի
քաղաքներ, որոնք դրանից աւելի բնակիչներ ու-
նեն:

Հիւանդներն էլ երեք կարգի են բաժանւում.—
առաջին կարգին են պատկանում զբաղմունքնե-
րը, կալուածատէրերը, առաջին գիւղի վաճառ-
ականները, գործարանատէրերը և առաջին վեց
դասակարգի աստիճանաւորները: Երկրորդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

VIII

Նպատակ ունենալով երեսնեան նահանգի այլ
և այլ գիւղերը տեսնել, ուսումնասիրել թէ նրանց
բնակիչների տիպն ու կացութիւնը և թէ նոյն
իսկ գիւղացիների բնակութիւնների տիպը, ևս
վճռելի գնալ երեսնից 18 վերստ հեռու գտնվող
Աշտարակ հայոց գիւղը:

Թիֆլիսից երեսն հիւսիս-արևմտեան գծով դա-
նալ ևս տեսնել էի հայոց գիւղերի այնպիսի տի-
պեր, ինչպէս են Գիւլիշանի, Ծաղկաձորի և Աւա-
նի ծովափի ափերի գիւղերը, ապա երեսն քաղա-
քին մօտակայ Չալի, Արինջ, Բանաքեր բուսակա-
նութեամբ հարուստ գիւղեր: Ապա երեսնից
դէպի էջմիածին, արևմտեան ճանապարհով գնա-
լով, ևս տեսաւ փարաքար գիւղը, յետոյ երեսնից
հարաւ-արևելեան ուղղութեամբ գնալով դէպի
Դաւալու, ևս այցելեցի Ջանդիկ-Բասարի, Գառնի:

Բասարի և Վեդի-Բասարի գիւղերը, այնուհետև
գառնից երեսնից դէպի Նոյնի, այսինքն հարաւ-
արևմտեան ուղղութեամբ գնալով, ևս առիթ ու-
նեցայ Հին-Նախիջևանի գաւառի և Ստեփանուի
գաւառի գիւղերի տիպն մասին գաղափար կազ-
մելու: Վերջապէս վճռեցի ուղևորվել երեսնից և
հիւսիս-արևմտեան ուղղութեամբ, Ալեքսանդրո-
պոլի ճանապարհով, դէպի Աշտարակ գիւղը և
Աքարանք:

Ժամը 7-ին առաւօտեան կառք վերցնելով,
ուղևորվեցայ այ. Մնացականսնի հետ դէպի Աշ-
տարակ: Երեսնից դուրս գալով, անցանք Գալմա
անուանված այգիների միջով: Ծանապարհը շուտ
չէ և շատ վատ ու քաղցարոտ է: Հասնելով Գալ-
մայի այգիներին ծայրին, ինչ շատ հետաքրքիր էր
տեսնել այն երեսնի և հնադարեան ջրանցքը, որը
անցնում է ամայի և քաղցարոտ ահազին դաշտե-
րի տակով, Հրազդան (Ջանդու) գետից ջուր անց-
կացնելով դէպի Գալմայի այգիները: Գա մի
ստորերկրեայ ջրանցք է, գետնի մակերևոյթից մի
քանի սաժէն խորութեամբ տննելի պէս շինված,
տեղ տեղ հորերի պէս բացուածքներ ունենալով:
Շատերը կարծում են, որ այդ տննելը կառուցել

էր ուսմանի ձեռքով երկրը տիրապետելուց ա-
ռաջ եղած վերջին պարսից սարդար, Հուսէյն-
խան սարդարը (մօտաւորապէս քսաներորդ թւա-
կաններում): Սակայն ուրիշներ կարծիքով դա
միայն տեղեկութիւն է և հաւանական է, որ սո-
նելը շատ աւելի հին է. դա հնադարեան հայկա-
կան ջրանցք է, որին Հուսէյն-սարդարը միայն
նորոգել է իր կառավարչութեան օրով: Հին հայ-
կական կուտուրայի հնաքները (ոչ թէ միայն հնա-
դարեան եկեղեցիներ) իւրաքանչիւր քաղաքում
խումբ են երևում այդ երկրի մէջ: Երեսնի հրա-
շալի կամուրջը, որը տանում է դէպի Սարդարի
այգին, նմանապէս հին հայկական շինութիւն է և
մինչև այժմ այն աստիճան ամուր է, որ երկրի
փոխադրանքներից մէկը, ինչպէս պատմում են,
այցելելով երեսնը և անցնելով կամուրջի վրայով
հիւսած այդ ամուր հայկական հնադարեան շէն-
քից, բացալանչեց, «այս, երեսն է որ կամուրջ
շինողները մի ինժեներները չէին»: Մի այլ հայ-
կական հնադարեան կամուրջ ճանապարհորդը կը
տեսնէ Գառնի գետի վրա, Աշտարակ գիւղը
մոտենալ:

Երեսնից մինչև Աշտարակ ճանապարհը տաղա-

կալի է և երկրի կատարելապէս ամայի: Ամբողջ
այդ տարածութիւնը, որի վրա ոչ մի հատ գիւղ
չը կայ, ծածկված է խոլոր ու մանր քարերով,
որոնք անհնարին են դարձնում հողի վերելքը,
մասնաւոր այդ ամբողջ քաղաքաւոր տարածու-
թեան վրա ոչ մի կաթիլ ջուր չը կայ: Այդ
դաշտը ջրելու և մշակելու համար նշանաւոր կա-
պիտաւոր կը հարկաւորվէին: Միայն Աշտարա-
կին մօտենալով տեղ տեղ երևում են վարած հո-
ղերի կտորներ: Բայց որքան աշխատանք, որքան
գոթալային աշխատասիրութիւն էր հարկաւոր հայ
գիւղացուն այդ հողը մշակելուց առաջ, մաքրել
գետինը նրա մակերևոյթը ծածկող և նրա մէջ
պարունակված հրաքոլային կաղնիքներն ունե-
ցող անթիւ անհամար քարերից....

Եւ ասեցի որ 18 վերստ տարածութիւն ունե-
ցող ճանապարհի վրա մինչև Աշտարակ գիւղը, ոչ
մի հատ գիւղ չը կայ: Միայն ճանապարհից բա-
ւական հեռու դէպի աջ կողմը սկզբից երևում է
Երեսնը Գառնից գիւղով, ապա նոյն ուղղու-
թեամբ, ճանապարհից հեռու գտնվում է Եղեարդ
հայաբնակ գիւղը, իսկ ձախ կողմում, մեծ հեռա-
ւորութեան վրա երևում է հետեանք գիւղերի

կարգին պատկանում են մասնաւոր հիմնարկութիւններում ծառայողները, որոնք տարեկան հազար լուրջաց աւելի ունենան, երկրորդը՝ զինվորականները, առևտրական ֆիրմաների գործակալները և եօթերորդը ու ութերորդը՝ դասակարգի աստիճանաւորները: Երբ որ դ կարգին պատկանում են մնացած բոլոր ընտանիքները:

Առաջին կարգի տեղերի համար՝ բժշկական վարձատրութիւնը սահմանված է հետևեալ կերպով. առաջին կարգին պատկանող հիւանդները՝ բժշկի այցելութեան համար վճարում են 1 լուրջ, երկրորդ կարգինը՝ 75 կոպէկ, և երրորդ կարգինը՝ 50 կոպէկ:

Երկրորդ կարգի տեղերում՝ առաջին կարգին պատկանողները վճարում են այցելութեան համար 1 լուրջ, 50 կոպէկ, երկրորդ կարգինը՝ 1 լուրջ, երրորդ կարգինը՝ 60 կոպէկ:

Երբ որ դ կարգի տեղերում՝ առաջին կարգին պատկանող հիւանդները վճարում են 2 լուրջ, երկրորդ կարգինը՝ 1 լուրջ, 50 կոպէկ, երրորդ կարգինը՝ 75 կոպէկ: Գիշերակայ այցելութիւնների համար, մինչև առաւօտեան 8 ժամը, որոշված վճարին պէս է աւելացնել 50 տոկոս:

ՆԱԾԱԿ ԷԶՄԻՍՏՆՈՅ

30 սեպտեմբերի

Երէկ, սեպտեմբերի 29-ին, շաբաթ օրը ու էջ միաձին տաճարում հանդիսաւոր պատարագ կար ի յիշատակ ի Տէր հանգուցեալ Գեորգ IV՝ կաթողիկոսի: Պատարագից յետոյ հոգեւորական դասը դուրս եկաւ եկեղեցուց և հողհանդիսաւ կատարեց Գեորգ IV կաթողիկոսի գերեզմանի վրա:

Աւելի գեղեցիկ էր ձևարարին XVI-րդ տարւոյ տարեդարձի հանգումը. այստեղ էին բոլոր եպիսկոպոսները, այստեղ էին ձևարարին սաները իրանց ուսուցիչներով, այստեղ էր խոռոն բազմութիւն: Ձևարարին տեսող վարդապետ Նահապետեան կարգադրեց ձևարարին մի ամառ գործունէութեան հաշիւը, որից երեսը որ ձևարարում կան 126 ուսանող, որոնց միայն երկուսը թոշակաւոր են, իսկ մնացեալը ձրի ուսանողներ են. նրանից յետոյ ճառ խօսեց ուսուցիչ Գարամբան, որը թուելով ձևարարին օգտաւետութիւնը և ազգին մատուցած օգուտը, յայտնեց, որ ազգը պարտական է լուսահողի կաթողիկոսի կառուցած ձևարարանը պահելու և պահպանելու. ձևարարին աշակերտները երգում էին ազգային երգեր: Երգերը վերջանալուց յետոյ խօսեց Նրեմիայ եպիսկոպոսը. սրբազանը մի առ մի թուեց հանգուցեալ կաթողիկոսի կատարած բարի գործերը և ձևարարին նշանակութիւնը: Հանդէսը վերջացաւ ժամը 2-ին: Նոյն օրը երեկոյան հոգեւորական դասը դնաց հանդիսաւոր կերպով եկեղեցի բերելու վեհ. կաթողիկոսին ժողովուրդը խոնարհ էր և վախազու էր մտնել տաճար, բայց հնար չէր գտնում, որովհետև դռնապաններն արգելում էին: Սովորական արարողութիւններով և շքեղութիւնով վեհափառին եկեղեցի բերին: Սկսվեց ժամերգութիւնը: Տաճարում ասեղ ցցելու տեղ չը կար:

Աւելի դժուար էր այսօր, ամսիս 30-ին: Գիշերվանից արդէն շատերը չէին քնել. վանքի սենեակներում և հայաթներում նուազաբանի և ե-

րաժշտութեան ձայներ էին լսվում. ժողովուրդը ցանկանում էր բոլոր առաջ մտնել վանքը, որպէս զի տեսնէ մեծօրհնութիւնը: Պատարագիչը ինքն վեհափառ կաթողիկոսն էր: Տառն եպիսկոպոսները ապաստարում էին Նորին Վեհափառութեանը: Վանքը և դուրսը լի էին ժողովուրդով. մոտաւոր ձրի էր և առանց տոմսակի:

Սկսվեց ու մեծօրհնութիւնը և ինչպէս կարգին է կարգադրեց աղօթքները և շարունակվեց պատարագը: Պատարագից յետոյ Նորին Վեհափառութիւնը սովորական շքով դնաց վեհափառը, որի միջոցին զինուորական երաժշտութիւնը նուազում էր:

Երեկոյեան Գեորգեան ձևարարին տարեդարձի առիթով ձևարարեց շքեղ լուսատուութեան: Ժողովուրդը բազմութեամբ լցված էր ձևարարին այգին: Երգում էին ձևարարին աշակերտները աղօթքներ երգելով. կար նաև հրախաղութիւն: Աշակերտները ցոյց տուին նաև բազմաթիւ կենդանի պատկերներ Յիսուսի կենցաղից:

Ժողովուրդը ցրվեցաւ ուրախ տրամադրութեան տակ: Էջմիածնի մէջ այս օրերս կարելի էր տեսնել ամեն երկրի և ամեն տեղի հայերին իրանց զանազան հագուստներով և տիպերով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտոսիի դերասանական խումբը շաբաթահաճում է աշուղութիւն ունենալ: Հասարակութիւնը սիրով յաճախում է ներկայացումները, ստանալով այնտեղ լաւ տպագրութիւններ: Մարտոսիի կենսաբան վերջածով պիտանիքը հետաքրքրական են և լաւ են խաղացվում: Միայն խորհուրդ կը տայինք խմբի գլխաւոր ու պարտիկներին ոչ միայն օրհնական կենսաբան վերջածով և ոչ միայն օրհնական բարբառով պիտանիքը չը ներկայացնել, որովհետև այդպիսի պիտանիքի համար նա խաղացողներ չունի, և խաղացողներն էլ վատ տպագրութիւն են թողնում:

Կղական արհեստագիտական ուսումնարանների համար մտադրութիւն կայ նոր կանոններ սեղակել:

Մեզ հաղորդում են, որ մինչև այժմ էլ իսկ այսօր հոկտեմբերի 6 է արդէն. լրեւնի թեմական զարգացի համար տեսող չէ նշանակված:

«Новое Время» լրագիրը հաղորդում է մի նորութիւն, այն է որ Եգիպտոսում կայ ուսուցիչ մի դպրոց: Այդ դպրոցը հիմնված է, առում են, մի ուսուսնական աղաքի ծախսով, կարելի է, և զմտվում է ուսուցիչ ժողովրդական լուսատուութեան միջնադարական հոգեւորական և թաղաւոր կայսրի հովանաւորութեան ներքո: Դպրոցում ուսանում են մօտ 200 աղքատ արաբներ: Ենթադրութիւն կայ այժմ լաւացնել այդ դպրոցի դասընթացը, այն պայմանով, որ այնտեղից աւարտող ընդունակ արաբները գալին Ռուսաստան՝ իրանց կրթութիւնը լրացնելու համար:

Թէ դեռ որ աստիճան մեր ժողովուրդի մէջ գոյութիւն ունի գաղաւթային վարդերի բնասութիւնը, երևում է հետեւեալից. Թիֆլիսի և Կոնստանդնուպոլի մէջ տեղի, քաղաքի մի քանի վերստ հեռաւորութեան վրայ գտնվող Աշտարակը որը մուրը ճանապարհով, անցնելով հին հայկական գեղեցիկ կամուրջը և վերջապէս հասնում ենք գիւղին: Գիւղի մոտքին մեզ գիւմարում են մօտ հարիւր հոգի գիւղի ներկայացուցիչները և հրաւիրում են մեզ իշխել Ներսէս V-որդ Աշտարակեցու տանը, որը այժմ Դուրեանց ընտանիքի սեփականութիւն է դարձել: Տունը այժմ նորոգված է և լի է զրօք ու թէ ներսից շատ վայելուչ տեսք ունի: Եւ շատ քիչ գիւղ տեսնել երևանեան նահանգում, որը Աշտարակի պէս գեղեցիկ զիջը ունենալ: Մասնաւոր հրապարակել է գիւղի վրա տեսնող հանգուցեալ Ներսէսի տան բալկոնից... Ահազին բարձրութեան ժայռի վրա գտնվող տան բալկոնի առջև ձգվում է մի ընդարձակ այգի, ապա ձեր առջև երևում է ամբողջ կանաչադարձ ձորը իր կարկաչաճօն կապտադոյն Գրատի գետով, որի վրայից անցնում է հին հայկական կամուրջը...

Մինչդեռ եւ զմայլում էի այդ տեսարանով, աշտարակիցի նոր ծանօթներս հրաւիրեցին ինձ անցնել գիւղի փողոցներով, նայել իրանց խաղողի այգիները և այցելել թէ Աշտարակի եկեղեցիները և թէ գիւղից երկու, երեք վերստ հեռու գտնվող Մոջմու Ս. Գեորգ հաղարանն վանքը:

Թեան վրա գտնվող Նալկիս գիւղի մի գիւղացու դէմ ուսնանալով, նրա մի գոմէշը երեք մարդիկ ծածուկ կերպով տանում են գիւղին մօտ գտնվող մի ձորի մէջ և այնտեղ կենդանի առնաւոր կաշիէն մաշկ ու մեջքը բառանչելով, գոռալով վազում է գիւղը և մի առ ժամանակ մնացող յետոյ սատուում: Ինչպէս պատմում են Թիֆլիսի եկած ծավիկացիները, յանցաւորներից մէկը բռնված է, իսկ կենդանու կաշին գտնված է Թիֆլիսում, ուր բերած և ծախած են լինում բարբարոսները:

Թիֆլիսի Ալեքսանդրեան այգին, որը առաջ ժողովրդի գլխաւոր զբօսարկայն էր, ուր ամբողջ գիշերը դրսնում էր հասարակութիւնը, այժմ ներկայացնում է միայն սրկիւնների և շրմուկիների ժողովատեղի, որոնք ծառերի տակ խուռ-խուռը նստած, սպասում են իրանց որսին: Այժմ այդ այգին գիշեր ժամանակ ոչ ոք չէ մտնում, իսկ մտնողն էլ, ի հարկէ, անվաւ չի դուրս գալ:

Ահա մի քանի օր է, որ Թիֆլիսի Արաւ-Արաւեան հրապարակի մօտ վախճանիկ է մի աղքատ ու չքաւոր մարդ և մինչև այժմ չէ թաղված: Հանգուցեալի մարդ մի քանի հարուստներին գիւմուց յետոյ, դիմել է նաև գերձակների հաւքարին, որպէս զի իրանց հաշուով որդուն թաղեն, բայց ամեն տեղ մերժում է ստացել:

Չորեքշաբթի, հոկտեմբերի 3-ին, քաղաքային թատրոնում ներկայացրին «Նորմա» օպերան, որը վաղուց է Թիֆլիսի հասարակութիւնը չէր տեսել: Հասարակութիւնը, անկասկած, չնորհալ կը լինէր թատրոնի վարձութիւնից, եթէ մի քանի օր էլ ոչ տեսնէր, բան թէ այնպէս, ինչպէս ներկայացվեց այդ օրը: Օպերայի գլխաւոր դերը Նորմայի դերն է, ուրեմն ինչ դարմանալի բան է, որ օպերան չաղողից, քանի որ Նորմայի դերը կատարող ա. Ֆլաւա Վանդերիկ հիւանդ լինելով, երգում էր միանգամայն խաղաղ ձայնով: Զարմանալի այն է, որ թատրոնական վարչութիւնը չարժանաւորում է հիւանդ երգիչներին բան դուրս բերել: Հասարակութեան համբերութիւնն էլ վերջապէս կարող է հասնել և նա կը սկսի աւելի խիստ կերպով իր անբաւարարութիւնը յայտնել: Մարդ գնում է թատրոն դուրսնալով, թէ ինչպէս բեմի վրա դերասանները տանջվում են: Պ. Վանդերիկ առաջին գործողութիւններում բաւական լաւ էր, բայց վերջին գործողութեան Նորմայի հետ ունեցած դուէտում նա էլ յոգնեց և հիւանդի դուէտից անձուռնի ձայներով մի կուտակում դուրս եկաւ: Համեմատաբար լաւ էին ա. Գորդի և ա. Բրօնի: Համբերիչները չը գիտէին իրանց երգի մասերը: Եւ երեսուն հոգուց կազմած խորում երեսուն տեսակ էին երգում: Գլխից Բարբերին էլ տեսնելով բեմի վրա տիրող խառնաշփոթութիւնը, օգնում էր նրանց երբեմն ինքն երգելով, երբեմն էլ այնպէս ուժեղացնում էր օրհնարի նուազումը, որ ամենքին խաղնում էր և ոչ ոք չէր կարելի լսել: Այդ վերջին միջոցը աւելի արմատական է և անհր խորհուրդ կը տալ ինք մեր գլխից օրհնարին աւելի յաճախ դիմել այդ միջոցին, զոնէ այն ժամանակ չի իմացվի թէ լաւ:

«Մշակ» ընկերացողը շատ լաւ գիտէ թէ ինչ է իմ ճանապարհորդութեան նպատակը. եւ ոչ ուխտաւոր եմ, ոչ հնազան եմ, ոչ էլ բնագետ, ուրեմն ոչ եկեղեցիները, ոչ էլ հնութիւնները չեն կարող իմ դիտողութեանս և ուսումնասիրութիւններիս աւարկայ լինել, նայալէս եւ ինձ իրաւունք չեմ համարում մանրամասնաբար շօշափել երկրի բնական հարստութիւններին վերաբերեալ հարցերը... Եւ հրապարակաւ դու լինելով ինձ համարում է հետաքրքրել և իմ ուսումնասիրութեանս առարկայ լինել միայն ժողովուրդը, ժողովրդի նիստ ու կացը, նրա անասական և հասարակական կենցաղը:

Մոջմու ուխտատեղիի մասին եւ միայն այսօր կատարեմ, որ այդ վանքը շատ հին շինութիւն է երևում և բաւական անխնամ դրութեան մէջ է: Երևում է թէ շինութիւնը շատ գեղեցիկ է իւր օրհնարան ունի և եւ հաւատացած եմ, որ երգեցիկ խմբի ձայնը շատ լաւ կը հնչէր այդ հնազարեան վանքի բարձր կամարների տակ: Վանաշայրն տեսց եմ թէ վանքը ներթական միջոցներից դուրս է ինչպէս հնար չունի վերա-նորոգել եկեղեցին, որի կտուրը խախտված է և անձրևի ժամանակ ջուրը վազում է կաթողիկէից:

Երգեն, թէ վատ: Այն ժամանակ մենք ոչ ոք չէինք լսի, ուրեմն անբաւարարութիւն էլ չէինք դրալ:

Տեղական լրագիրները հաղորդում են, որ այս օրերս Թէրանից Լոնդոն գնալու համար Պարսկաստանի անգլիական դեսպան սըր Գրուսմոնդ Վոլթի Թիֆլիսում պիտի իջնի՝ կովկասեան պ. կառավարչապետի հետ տեսնվելու համար:

Մեզ գրում են Երևանից, որ շուտով պ. Գրիգոր Արծրունի ճանապարհ պիտի ընկնի դէպի Թիֆլիս:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, պ. Վարդան Վարդանեան խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Վարդապետ Վարդապետ» օգոստոս ամսույ համարում վեհ. կաթողիկոսի հրամանը, որով իմ գեղադրած հրատարակութիւնը՝ «Հայկական նշանագրեր և ծաղկազարդ ձեռագործիկ համար», ընդունվում է հայոց բոլոր օրիորդաց ուսումնարաններում որպէս ձեռնարկ, խնդրում եմ ուսուցչուհիներին և ուսուցչիներից հարկաւոր քանակութեամբ ստանալու համար դիմել ինձ հետեւալ հասցեով. С. Петербургъ, Невскій пр. въ армянскую церковь, В. Варданян. Մի և նոյն ժամանակ աշակերտների համար միայն ձեռնարկի գինը կը լինի ճանապարհածախով 40 կոպէկ, փոխանակ 50 կ. առանց ճանապարհածախի:

Իր. Գ. Ի. Ի. Ի. մեզ գրում են. «Մեղեալ տարվանից օրիորդաց դպրոցը գետնից ընկել էր երեք փոխ հազարածու պ. Գրիգորեանի շինութեան մէջ, բայց ներկայ սեպտեմբերի վերջերում, երբ մինչև իսկ վերջինս սկսված էին, չը գիտէին ինչպէս դրոշմ վերադնելու հոգաբարձուն դուրս է թափել իր տանից դպրոցական իրեղենները և տունը վարձով տուել ուրիշներին, առանց միև հոգաբարձուներին մի բան անգամ ասելու: Այսպիսի մի վարմունք այն էլ մի հոգաբարձուի կողմից, միանգամայն դատապարտելի է: Եւ մենք համոզված ենք, որ պ. հոգաբարձուն այնքան փորձված, այնքան խելացի և զգոյշ մարդ է, որ հաղիւ թէ ինքնաբերաբար այդպիսի մի սխալ քայլ անել, եթէ մի օր և է կողմնակի մարդու ճնշմամբ արած չը լինի այդ սխալը, ապա ուրեմն թող շտապի օր առաջ օւղղել իր այդ պախարակելի սխալը՝ դպրոցը կրկին իր տունն ընդունելով»:

Հին-ՆԱԽԻՉԻՍԻՍ, Ս. Երրորդութեան եկեղեցու հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Որպէս յայտնի է մեր քաղաքի հայ հասարակութիւնը անցեալ տարվանից ձեռք է դարձել նոր եկեղեցու շինութեան» Ս. Երրորդութեան անունով, հին և խաբխուր համանուն եկեղեցու փոխարէն: Այժմ շնորհալուութեամբ ստացանք այն եկեղեցու շինութեան օգոստի Ստեփանից պ. Բազալ Միլի-Երմանի ձեռքով հաւաքած 239 լուրջին: Պատիւ ունենը յայտնելու մեր խորին շնորհալուութիւնը՝ որպէս պ. հանգանակողին նայալէս և պ. պ. նուիրատուներին: Յանկալի է, որ մեր քաղաքից հեռու գտնվող մեր հայրենաւորները և քաղաքացիները օժանդակէին դրամական նպատակներով նորակառուց եկեղեցու հաս-

ու թափվում է եկեղեցու մէջ, փաշտելով խորանի սրբատաշ քարերն և սրբելով, ջնջելով պատերի վրա նկարված հին պատկերները: Եղած նիւթական միջոցները վանահայրը գործ է դնում եկեղեցու գաւթում ուխտաւորների համար մի մեծ, երկու յարկանի տուն շինելու: Քանի մի օրից յետոյ լինելու է վանքի ուխտի տօնը և ուխտաւորները երկրի ամեն կողմերից, նմանապէս և մանրուկը ծախողները հաւաքվում են արդէն վանքի գաւթում: Առհասարակ թէ Մոջմու տօնին և թէ սեպտեմբերի 30-ին Էջմիածնում լինելի մեծօրհնութեան տօնին ներկայ գտնվելու համար երկրի ամեն կողմերից հաւաքվում են արդէն բազմաթիւ հայ ուխտաւորներ:

Այցելեցի և Աշտարակ գիւղի եկեղեցիները: Հին աւերակ բերդը, որոնք, իմ կարծիքով, բացի պատմական նշանակութիւնից՝ առանձին հետաքրքրութիւն չեն ներկայացնում ճանապարհորդի համար:

Հետեւալ, IX-որդ թղթակցութեանս մէջ աւելի մանրամասն կերպով կը խօսեմ Աշտարակ գիւղի և նրա բնակիչների բնակարաններում ու կենցաղի մասին:

Գրիգոր Արծրունի

Ապահանգ-ճանապարհորդական գնացքը
ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Բաթում... 3 ժ. 10 ր. ցերեկ.
ԲԱԹՈՒՄԻՑ գալիս է Թիֆլիս... 8 > > առա.
ԹԻՖԼԻՍԻՑ գնացի Գանձակ... 9 > 45 > առա.
ԳԱՆՁԱԿԻՑ գալիս է Թիֆլիս... 8 > 20 > երեկ.

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳՆԱԿԵՐ
Ամառային երթևեկություն
ԵՐԵՎԱՆԻՑ օրերը, երեկոյան 4 ժամին,
Հոգնաբեր Բաթումից ուղևորվում է Օդեսա՝ Սու-
խումի և Նովորոսիյսկի վրայով:

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, երեկոյան 4 ժամին, ուղ-
ղակի ընթացի, Նովորոսիյսկի վրայով:
ՇԱԲԱԹ օրերը, 8 ժամին երեկոյան, չբական
ընթացի, բոլոր նաւահանգիստների վրայով:
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ օրերը, 7 ժամին երեկոյան, ար-
տասանման ընթացի գնացի Կ. Պոլիս:

ժամանակաւոր խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿԱՆՈՍԵԱՆՑ
Հրատարակել է ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿԻՆ-ԲԻՅԻՆԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Վանքի Մեծ փողոցի և Մուխրանսկի փողոցի անկիւն, տուն Զանդիկի: 1—5

ԲԵՇԿԱՊԵՏ ՏԵՐ-ՋԱՆԵԱՆՑ
Վերադառնալով Թիֆլիս, ընդունում է հիւանդներին, սովորական ժամերին՝ առաւօտան
10—11½ ժամը: Վերամիտոսկոպ փողոց, № 10, տուն Մեղվիկովի: Աղքատներին ըն-
դունում է ձրի, ամեն օր երեկոյան 6—7 ժամը: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆ
Շաբաթ օր, հոկտեմբերի 6-ին, տեղի կունենայ յայտնի պիւնիստ, Մուկիայի կոնսեր-
վատորիայի պրոֆեսոր
Ա. Ի. ԶԻՂՍՏԻԻ ԿՈՆՏԵՐՏՑ
Տոմարները և ծրագիրը կարելի է ստանալ Միլիմանեանի նուագաճութեան գործիքների
ղլխավոր պահեստում, Գլորցովայա փողոց: 2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Հոգնաւոր կանոնաւոր և ուղղակի երթևեկություն ՄԱՐՍԵԻՑ գնացի ԲԱԹՈՒՄ, Հորեք-
շաբաթ օրերը, երեկոյան 4 ժամին, ձրի անգամ, Հորեքշաբաթի 4/16 ապրիլից սկսած
ԵՒ ՓՈՒՆԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:
ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳՆԱԿԵՐԸ ԳՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ
Հինգշաբաթի, 11/23 հոկտեմբերի շոգնաւ ՍԻՐԿԱՍԻ — ԲՕՇԵԼ
25 հոկտեմբերի (6 նոյեմբերի) — ՄԻՆԳՐԵԼԻԱ — ԺԻԲՈՒԷՆ
8/20 նոյեմբերի — ԱՆՍՈՒԼԻԱ — ԳԱՐԻԻԿ
22 նոյեմբերի (4 դեկտեմբերի) — ՍԻՐԿԱՍԻ — ԲՕՇԵԼ
Տոմարները ուղղակի երթևեկություն Բաթումից գնացի Պարիզ իրական գնից պակե-
ցովում է:
Տեղեկությունների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն
ղիմել ընկերություն ագենտներին. ԲԱԹՈՒՄԻՑ պ. Գարանիմին, Նաբերէճայա, իսկ
ԹԻՖԼԻՍԻՑ պ. Վրկաթ ԳԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին զինեղալ ՏԵՐ-ԱՍԱՏՈՐՈՎԻ
տանը: 4—10 (Ե. Լ. Զ.)

ВЫСОЧАЙШЕ
ТОВАРИ-
МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-
БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ
ВЪ ОДЕССѢ.

УТВЕРЖДЕнное
ЩЕСТВО
ГУМНО-ЖИТЕНАГО ЗАВОДА

Складъ и производство сельско-хозяйственныхъ и за-
водскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ
мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовскыя, вальцовыхъ поставовъ
крупосѣкъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсо-
пильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ,
кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна.
Маслобоекъ, брадспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голливортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполнение всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокурен-
ныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ.

Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба-
рабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клейтонъ и Шутлѳортъ въ Линкольнѣ,
и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь»
Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРИО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и бужирныхъ
пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ
судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Никола-
евскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального учи-
лища кв. № 8.

31—100 (Ե. Լ. Զ.)

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԵՄ
ՕԼԶԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻ-
ԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ճակվում է 40 կոպեկով

Գեղադորձական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերության մէջ Թիֆլի-
սում:
27—52 (Շ.)

Գլխավոր պա-
հետը գործ-
վում է Թիֆլի-
սում և Բադ-
Լում Բարձրա-
դոյն հաստատ-

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА
ПРИВЛЕГЕНІЮ
ПРИВАННОЙ ПОМАДЫ
ПОМАДЫ
ЕВРОПЕЙСКАГО
БЕРНГАРДТЪ

Վաճառման Կով-
կասեան ընկե-
րության մաս:
8—50 (Հ.)

ՊՐՈԳՆՈՐ Ա. ՇՏԵԼԻՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԵՄ
ՊՐՈԳՆՈՐ ԱՏԱՄՆԱԳԵՂ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿԱՑՆԵԱՆ ԱՏԱՄՆԱԳԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԳԻՆ ՓՈՇԵ 30 ԿՈՊ.

ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ:
ԹԻՖԼԻՍԻՑ Գեղադորձական
ապրանքների Կովկասեան ըն-
կերություն մէջ և պ. պ. Շա-
պարանեանցի, Մակկերի, Սէնչի-
կովսկու և Ագմուրովի դեղա-
աներում:

УБНЫЯ КАПЛИ: КОР. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИР: ФЛ. 80 К.

30—52 (Հ.)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԱՅՑ ԹԻԻՐԻՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
(ՀԱՅ ՏՈՒՐԻՍԻ ԹԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)
Աշխատութիւն Լևան Սարգսեանի: Գինն է 60 կոպեկ: Վաճառվում է Թիֆլիսի հայ դրա-
վաճառների մօտ և «Մուրճի» խմբագրատանը: 2—5

ՄԻ ԸՆՏԱՆԻՔ ընդունում է գիշերօթիկ աշակերտներ մատչելի գներով: Աշա-
կերտների հետ կրկնություններ կանեն: Նոյն տեղը կտրելի է Ֆրանսերէնի և գերմանե-
րէնի դասեր վերցնել: Հասցեն. Авчалская площадь, домъ Исарлова, квартира Лункевича.
6—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆԻ
(Կովկաս, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
ԱՌԱՐՕՏՆԵՐԸ
ՆԱԽԱՐԱՐԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական (և առանձնապէս) սիֆիլիսի և աչքացաւի
ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԻՅԻՆԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԻՅԻՆԿ ՍՈՒՐԻՆՍԿԱՅԱ—12—12½ ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻԺ—12—1 ժ. ակտիւ, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:
ԵՐԵԿՈՒՆԵՐԸ
ԳԱԳՈՍՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժական.
ՓՈՒԴԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջլային ց. (էկզորտերապիա):
ՆԱԽԱՐԱՐԵԱՆ—6—7 ժ.
ՎՃԱՐ—50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—Երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:
Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ ՆԱԽԱՐԱՐԵԱՆ

Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտա-
կան գործիքների և նուստների կովկասեան կեն-
տրոնական դէպօ:
ԵՂ. Բ. ԳԻՏԵՐԻՍԻ
Ուսանելու և պետերգութեան դաշնամուրային գործարանի
ՐՕԵԱԼՆԵՐ ԵՒ ՊԻԱՆՆՈՒՆԵՐ
Մ. ՇԵՐԵՐԻ, ԲԵԿԵՐԻ, ՍԻԳԻՐԻ, ՄԻԼԵՐԻ,
Գեղերի, յայտնի արտասահմանեան գործարանների Շիդլույերի, Բլիստերի, Բելաշեյնի
Գլավաշի արձնապահան: Շիդլույերի Հարմօնիումներ: ՄԱԼՈՒՄ Է ԵՒ ՎԱՐՁՈՎ ՏՐՈՒՄ
Թիֆլիս. Գլորցովայա փողոց, Թիֆլիսի ազնուականների կալուածական բանկի տան մէ:
6—16

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
(Միջադէպի կամուրջ, № 52)
ՏՐՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԻՆԵՐ: Ամսվան վճարը 20 և 10 կոպեկ: Բաց է
առաւօտեան 9½—2 ժամը, և երեկոյեան 4—7 ժամը: Իսկ կիրակի օրերը
9½—12 ժամը 2—10